ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԴԴ-ՄԱԾՁԲ-20/10»

ք. Երևան «03» հոկտեմբերի 2020թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մովսես Շինարար» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Սարուխանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են կապալային աշխատանքների կատարման թիվ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/02» պայմանագրում /կնքված 10.09.2020թ./:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում **է 291 000 (երկու հարյուր իննսունմեկ հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	***«Մովսես Շինարար» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Արթիկ, Գ. Նժդեհի 3
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 06107808
Հ/Հ՝ 900011025757	Հ/Հ՝ 247040112291/0010
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ, «Արթիկ» մ/ճ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Ս. Սարուխանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«03» հոկտեմբերի 2020 թ. կնքված
«ԴԴ-ՄԱԾՁԲ-20/10» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման հասցեն	մատուցման ժամկետը*
1	71351540/2	**Դատական դեպարտամենտի կարիքների համար կարիքների համար Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերում** **-Շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման բնութագիրը՝ Աշխատանքների որակի (վերանորոգման աշխատանքների կատարման բոլոր փուլերում) տեխնիկական հսկողության (այսուհետ՝ Հսկողություն) ամենօրյա ծառայության մատուցում՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 19.03.2015թ-ի թիվ 596-Ն որոշման և ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ-ի թիվ 44 ու 14.01.2008թ-ի թիվ 11-Ն հրամանների համաձայն:** **-Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը՝ Կից ներկայացվող Ծավալաթերթով նախատեսված աշխատանքներ:** **-Տեխնիկական առաջադրանք** **✓ Ամենօրյա հսկողության իրականացում Պատվիրատուի կողմից սահմանվող պարտավորությունների համաձայն:** **✓ Առանձին տեսակի շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության և կատարողական ակտերի ներկայացման ապահովում հիմնական լիցենզիային կից ներկայացվող ներդիրներում ընդգրկված մասնագետների միջոցով և գրավոր հաստատմամբ:** **✓ Ամենօրյա հսկողական (համատարած) ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային լուծումներին, շինարարական նորմերին ու կանոններին:** **✓ Ամենօրյա հսկողական (համատարած) ստուգման միջոցով**	դրամ	291 000	1	Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայր / ք. Արշակունյաց պող., 24/1 /	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից, մինչև <<ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/02>> ծածկագրով պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտը /40 օրացուցային օր/

		օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև օգտագործվող նյութերը, իրերը և կառուցվածքների որակը, աշխատանքների կատարման տեխնոլոգիաները ստանդարտներին, տեխնիկական և նորմատիվ փաստաթղթերի այլ պահանջներին համապատասխանության ապահովում: **✓ Ամենօրյա հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում** **✓ Ամենօրյա հսկողական չափագրությունների միջոցով փաստացի կատարված վերանորոգման աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության ապահովում, ամենամսյա հաշվետվությունների ներկայացում:** **✓ Ամենօրյա հսկողական չափագրությունների միջոցով փաստացի կատարված վերանորոգման աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության ապահովում, ամենամսյա հաշվետվությունների ներկայացում:** **✓ Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում**					

Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությունը նախօրոք անհրաժեշտ է համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

Ծառայության մատուցման ժամկետ է սահմանվում շինարարական աշխատանքների կապալի պայմանագրով սահմանված ժամկետը՝ որը կարող է վերանայվել վերանորոգման աշխատանքների տևողության փոփոխության արդյունքում:

*Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011025757
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)
L.H.S

ԿԱՏԱՐՈՂ
«Մովսես Շինարար» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Արթիկ,
Գ. Նժդեհի 3
ՀՎՀՀ՝ 06107808
Հ/Հ՝ 247040112291/0010
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ, «Արթիկ» մ/ճ

Տնօրեն՝ Ս. Սարոյանյան

(ստորագրություն)

Հավելված N 2
«09» հոկտեմբերի 2020 թ. կնքված
«ԴԴ-ՄԱԾՁԲ-20/10» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351540/2	Տեխնիկական հսկողության ծառայություններ										291 000	291 000	291 000	**291 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դպրական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011025757
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Մովսես Շինարար» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Արթիկ,
Գ. Նժդեհի 3
ՀՎՀՀ՝ 06107808
Հ/Հ՝ 247040112291/0010
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ, «Արթիկ» մ/ճ

Տնօրեն՝ Ս. Սարուխանյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
« » հոկտեմբերի 2020 թ. կնքված
«ԴԴ-ՄԱԾՁԲ-20/10» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » հոկտեմբերի 2020 թ. կնքված
«ԴԴ-ՄԱԾՁԲ-20/10» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Քանակ
1	2	3	4
	1.Համաշինարարական աշխատանքներ		
	Քանդման աշխատանքներ		
1	Գոյություն ունեցող հարթ թիթեղից ծածկի քանդում ջրհոսների հետ միասին	$մ^2$	1116.28
2	Տանիքի գոյություն ունեցող հարթ ցինկապատ թիթեղից երեսպատման քանդում/պարապետ,գլխադիր, ձեղնալուսամուտ, զոգնոց/	$մ^2$	113.5
3	Արտաքին պատերի ներկի մաքրում հին ներկի մաքրում	$մ^2$	46.20
4	Տանիքի պաշտպանիչ ճաղաշարի ապամոնտաժում	տ	0.838
5	Ջրհոս խողովակների ապամոնտաժում 13,5մ բարձրությամբ d=140	կ-տ	6.00
6	Փայտե դռների ապամոնտաժում	$մ^2$	9.12
7	Մետաղապլաստե դռների և պատուհանների ապամոնտաժում	$մ^2$	4.40
8	Միջնորմների քանդում պեմզաբլոկներից 200mm	$մ^3$	17.1
9	Լամինատե հատակների քանդում	$մ^2$	17.4
10	Պրեսգրանիտե սալերով հատակների քանդում	$մ^2$	3.2
11	Ց/ավազե հարթաշերտի քանդում 30մմ հաստ.	$մ^2$	3.2
12	Պատերի և առաստաղների հին ներկի մաքրում	$մ^2$	389.35
13	Շին աղբի բարձում և տեղափոխում 12կմ հեռ.վրա	տ	30.50
	Տանիք		
1	Ջրհորդանների, կավարամածի և պիպի վնասված տախտակամածի փոխարինում նորով	մ2	64
2	Տանիքածածկի իրականացում պրոֆիլավոր КП21-0,55մմ ցինկապատ թիթեղով /պիպի թիթեղով,զոգնոց/	$մ^2$	1078.7
3	Ջրհորդանների փոխում ցինկապատ 0.55մմ թիթեղով.	գծմ	48.40
4	Ջրհոս խողովակների կոմպլեկտ 13,5մ բարձրությամբ d=160 ցինկապատ թիթեղով	կ-տ	6.00
5	Մանր ծածկույթներ և օդափոխության պատուհանների երեսպատում 0.55մմ ցինկապատ թիթեղով	$մ^2$	99.5
6	Ջրհոսներ 0.55մմ ցինկապատ թիթեղով	$մ^2$	37.6
7	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանություն	$մ^3$	0.77
8	Արտաքին պատերի ներկում ֆասադային ներկով-ծեփամածկումով	$մ^2$	46.2
9	Տանիքի պաշտպանիչ ճաղաշարի մոնտաժում հին ճաղաշար/	տ	0.838
10	Մետաղական ճաղաշարերի ներկում	տ	0.84
11	Տանիքի հակահրդեհային աստիճանների ներկում հակակոռոզիոն ներկով	$մ^2$	16.3
	Տանիքում տաքացվող մալուխների մոնտաժում		
1	Բաշխիչ վահանի մոնտաժում ИЭК ШЭ	հատ	1

2	Ավտոմատ անջատիչ ABB Tmax T43*63	հատ	1
3	Ավտոմատ անջատիչ ABB Tmax T41*25	հատ	4
4	Էլմագնիսական թողարկիչ	հատ	4
5	Ինքնակարգավորվող տաքացվող մալուխի մոնտաժում EXL30-2CD-30wt	գծմ	443.2
6	Մալուխ ՊՎՐ 3*4 մմ2	գծմ	107
7	Տրոս 2,8մմ	գծմ	100.2
8	Ծայրակալ	կ-տ	1
9	Ճալքավոր խողովակ Φ25	գծմ	72
10	Ակոսի բացում	գծմ	35.0
11	Ակոսի փակում	մ^2	1.75
12	Հերմետիկ փակվող մոնտաժային տուփ	հատ	1
	Բացվածքների բացում		
1	Բացվածքների բացում	մ^3	0.43
2	Բացվածքի ուժեղացում մետաղական էլեմենտներով	կգ	62.83
3	Ց/ավազե սվաղի իրականացում ցանցի վրա Φ1,5 բջիջը 20*20	մ^2	1.14
	Միջնորմեր		
1	Միջնորմների իրականացում պեմզաբլոկներով 200mm	մ^3	5.40
2	Միջնորմների անցքերի լցնում թեթև բետոնով	մ^3	2.43
3	Ամրանավորում Φ8 A500c	տ	0.0315
4	Անցքերի շաղափում պատերում, առաստաղներում և հատակներում Φ10մմ L=100մմ	հատ	44.00
5	Անցքերի լցափակում պոլիմերցեմենտային լուծույթով	մ^3	0.0030
6	Ե/բետոնե բարավորի իրականացում B15 բետոնով	մ^3	0.13
7	Ամրան Φ12A500c	տ	0.0116
8	Ամրան Φ8 A240	տ	0.0050
	Վերանորոգման աշխատանքներ		
1	Ց/ավազե հարթաշերտի իրականացում 3սմ հաստ.	մ^2	3.20
2	Լամինատե հատակների իրականացում սպունգով շրիշակով	մ^2	20.60
3	Պատերի գաջի սվաղի իրականացում	մ^2	49.2
4	Պատերի գաջի սվաղի վերանորոգում	մ^2	54.29
5	Առաստաղների գաջի սվաղի վերանորոգում	մ^2	30.75
6	Պատերի և շեպերի քսահարթում գիպսոնիտով	մ^2	162.9
7	Առաստաղների քսահարթում գիպսոնիտով	մ^2	92.24
8	Պատերի և շեպերի ներկում լատեքսային ներկով ծեփամածկումով	մ^2	266.4
9	Առաստաղների ներկում լատեքսային ներկով ծեփամածկումով	մ^2	123.0
10	Փայտե դռների վերամոնտաժում	մ^2	9.12
11	Մետաղապլաստե դռների վերամոնտաժում	մ^2	3.80
	Նոր բեմ		
1	Փայտե կոնստրուկցիաների հիրականացում	մ^3	0.82
2	Փայտե հղկված տախտակով 50մմ հաստ. հատակների իրականացում	մ^2	6.94
3	Փայտե հղկված տախտակով 30մմ հաստ. հատակների իրականացում	մ^2	0.54
4	Երեսպատում երկկողմանի լամինացվաց 18մմ հաստ.լամինացվաց սալով	մ^2	1.59
5	Փայտե լամինացված եզրակալ	գծմ	5.300

6	Լամինատե հատակների իրականացում սպունգով 10սմ բարձ.շրիշակով	$մ^2$	7.14
7	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանություն	$մ^3$	1.18
	Այլ աշխատանքներ		
1	Գոյություն ունեցող այլումինե ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում և մոնտաժում	հատ	4.00
2	Ջեռուցման խողովակների ապամոնտաժում և մոնտաժում	գմ	46.0
3	Գույքի տեղափոխում	տ	2.00
4	Պատերի փայտե երեսպատման ապամոնտաժում և մոնտաժում	$մ^2$	10.0
	Բաժին 2 Էլեկտրաէներգիա		
	Էլեկտրաէներգիա		
1	ՎՎԳՆհ 3*1,5$մմ^2$ պղնձե ջիղով, մալուխի մոնտաժում	գծմ	42.0
2	ՎՎԳՆհ 3*4 $մմ^2$ պղնձե ջիղով, մալուխի մոնտաժում	գծմ	43.0
3	ՎՎԳՆհ 3*6 $մմ^2$ պղնձե ջիղով, մալուխի մոնտաժում	գծմ	18.0
4	Անջատիչ երկու սեղմակով 220Վ	հատ	2.00
5	Երկբևեռ վարդակ հողանցման հպակով 220Վ	հատ	11
6	Տուփ անջատիչների և վարդակների համար տեղադրումով	հատ	13
7	Բաժանման տուփեր	հատ	2
8	Լուսատ LED 190*190- 4000K 20wt	հատ	10
9	Միաֆազ ավտոմատ անջատիչ 63Ա	հատ	2.0
10	Պոլիէթիլենային էլեկտրատեխնիկական գոֆրե խողովակ Φ20 տրամագծով չայրվող	գծմ	103.0
11	Ակոսի բացում	գծմ	103.0
12	Ակոսի փակում	$մ^2$	3.09

Հիմք

Միջին աշխատավարձը *178954*

Մնացումային գործակիցները: